ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

1. Տնօրենի թափուր պաշտոնում կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող՝ Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

2. Հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.
ա/ առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ.
բ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.
գ/ տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
դ/ աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
ե/ բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
զ/ կատարում է աշխատանքի բաշխում

է/ օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
ը/ իրականացնում է կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.
թ/ վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
ժ/ ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
ժա/ կազմում է կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմնի հաստատմանը.
ժբ/ իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

3.Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները պահանջվող ներքոհիշյալ փաստաթղթերը փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնում են Սյունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին.

1) լրացված դիմում՝ ըստ սահմանված ձևանմուշի, որտեղ նշվում են առնվազն հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, որոնց իսկությունը և հասանելիությունը ստուգվում է անմիջապես.
2) ինքնակենսագրություն, ոճը՝ մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունում լիազորված պետական մարմնի կողմից սահմանված ձևաչափով.
3) անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակների սկանավորված տարբերակը).
4) 2 գունավոր լուսանկար՝ 3 x4 չափսի (էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ էլեկտրոնային).
5) բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները) (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը) առկայության դեպքում
6) արական սեռի քաղաքացիները նաև զին.գրքույկի պատճենը/
7) օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը)՝ առկայության դեպքում.
8) գիտական աստիճանի վկայականը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները), իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ բնօրինակի (բնօրինակների) սկանավորված տարբերակը)՝ առկայության դեպքում.
9) աշխատանքային գործունեությունը հավաստող վավերացված համապատասխան տեղեկանք (փաստաթուղթ):
10). հայեցակարգը, որը պետք է՝
1) լինի առավելագույնը 20 էջ.
2) պարունակի համապատասխան պետական կազմակերպության ոլորտի առկա խնդիրների համակարգային վերլուծությունը և գնահատումը.
3) ներառի համապատասխան պետական կազմակերպության բնագավառի զարգացման և բարեփոխման առաջարկները:
4. Պետական կազմակերպության գործադիր մարմնի մրցույթին չի կարող մասնակցել այն անձը, ով՝
1) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
2) օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել կամ ով զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.
3) նախորդ 3 տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և

կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

5. Հիմնական աշխատավարձը՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ:

6. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

7. Մրցույթի թեստավորման փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի և հմտությունների հստակ շրջանակը.

1) Սահմանադրություն. հոդվածներ՝ 1,2, 3, 4, 5, 6, 7, 8, 10, 13, 14, 15, 16, 25, 27, 31, 32, 36, 37, 38, 39, 62, 72, 73,74

2) Աշխատանքային օրենսգիրք. հոդվածներ՝ 18, 18.1, 20, 33, 83, 85, 109, 111, 115, 124, 144, 147, 148, 152, 158, 159, 169

3) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենք. հոդվածներ՝ 3, 4, 5, 6, 10, 11, 13, 15, 16, 17, 23, 25

4) «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը. հոդվածներ՝ 2^1 , 4^1 , 5, 6,8, 9, 10, 11, 13, 13.1, 13.2, 14, 15

5) «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը. հոդվածներ՝ 2,7,8,9,10,11,12,13,17,18

6) «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը. հոդվածներ՝ 4,5,6,7,8,9,14,15,16,17,18,21,22

7) « Պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքը, հոդվածներ՝ 3, 4, 5, 5.3, 6, 13, 23, 44, 45

8. Մրցույթի հարցազրույցի փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի և հմտությունների հստակ շրջանակը.

1) մասնագիտական գիտելիքների ստուգում.

2) հմտությունների (օրինակ՝ առաջնորդում, ռազմավարական պլանավորում, վերլուծական մտածողություն, որոշումների կայացում, հաղորդակցման հմտություններ, բանակցությունների վարում, փոփոխությունների կառավարում, կոնֆլիկտների կառավարում, ժամանակի կառավարում, տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետում, տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, օտար լեզվի իմացություն և այլն) ստուգում.

3) անձնական որակների բացահայտում (աշխատանքային էթիկայի կանոնների իմացություն և այլն).

4) հայեցակարգի ներկայացում:

9. Մասնագիտական գիտելիքների և հմտությունների շրջանակը ներառում է սույն հայտարարության 7-րդ կետում ներառված իրավական ակտերի շրջանակից հարցեր:

Թեստավորման փուլը կանցկացվի 2026 թվականի օգոստոսի 25 -ին ժամը 11 ^{00}-ին ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի շենքում /ք. Կապան, Նժդեհի 1/.

Հարցազրույցի փուլը կանցկացվի 2026 թվականի օգոստոսի 28 -ին ժամը 11 ^{00}-ին ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի շենքում /ք. Կապան, Նժդեհի 1/.

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով, իսկ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ <<syunik.anznakazm@mail.ru>> էլ. հասցեին:

Փաստաթղթերն ընդունվում են 2026թ. հուլիսի 22-ից ամեն օր ժամը 9^{00} - 13^{00} -ը, բացի շաբաթ, կիրակի, ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին, հեռ. 0285-4-42-75:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2026 թվականի օգոստոսի 11-ը ներառյալ:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին, հեռ. 0285-4-42-75:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ

Ձև 1

Թեստային հարցերի նմուշ

1.Ինչպե՞ս է ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում Հայաստանի Հանրապետությունում՝

1)ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով.

2) ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով.

3)ազատ ընտրությունների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով.

4) ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:

2.Պետական ոչ առևտրային կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել

1) միայն դատական կարգով.
2) միայն հիմնադրի որոշումով.
3) միայն լիազորված պետական մարմնի ղեկավարի հրամանով.
4) միայն մարզպետի որոշումով:

Ձև 2

Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզպետ Ռոբերտ Ղուկասյանին

-ից

Դիմողի (անունը, հայրանունը, ազգանունը)

անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

(հանրային ծառայության համարանիշը կամ համապատասխան տեղեկանքի համարը և տրման ամսաթիվը, եթե անձը հրաժարվել է հանրային ծառայության համարանիշի տրամադրումից)

(հաշվառման հասցեն)

(հեռախոսահամարները՝ բջջային և աշխատանքային)

(էլեկտրոնային փոստի հասցեն)

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ ինձ թույլատրել մասնակցելու

_____

_____

թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթին:

Միաժամանակ հայտնում եմ, որ՝

1. հայերենին _____

(տիրապետում եմ, չեմ տիրապետում)

2. դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ _____

(ճանաչվել եմ, չեմ ճանաչվել)

3. սահմանված կարգով չհանված կամ չմարված դատվածություն _____

(ունեմ, չունեմ)

4. օրենքի համաձայն որոշակի պաշտոններ զբաղեցնել _____

(արգելվել է, չի արգելվել)

կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից _____

(զրկվել եմ, չեմ զրկվել)

5. Նախորդ 3 տարվա ընթացքում սնանկանալու պատճառով լուծարված և կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար _____

(եղել եմ, չեմ եղել)

6. Որև է կազմակերպություն _____, որև է կազմակերպության

(հիմնադրել եմ, չեմ հիմնադրել)

հիմնադիր _____, ձեռնարկատիրական գործունեությամբ _____

չեմ հանդիսանում չեմ զբաղվում

7. Տիրապետում եմ հետևյալ համակարգչային ծրագրերին

☐ Windows, ☐ Word, ☐ Excel, ☐ Access, ☐ PowerPoin, ☐ այլ

8. Տիրապետում եմ հետևյալ օտար լեզուներին՝

_____

(տիրապետում եմ ազատ, կարդում և կարող եմ բացատրվել)

_____

(տիրապետում եմ ազատ, կարդում և կարող եմ բացատրվել)

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերի պատճենները՝

_____
_____
_____
_____

_____
_____
_____
_____
_____
_____
_____

Նախազգուշացված եմ՝ պաշտոնում նշանակվելու դեպքում, կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____ (_____)

(ստորագրություն) (անունը, ազգանունը)

« _____ » _____ 2026 թ.